Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

85
1-77

Գ. Գոր. 38.5

Մանկական — թատրոն
№ 387

ՊՕԼՈՒԻՄ ՊԷՐԲԱԼ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

ԵՐԿՈՒ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

№ 237 m.

(Գ. ԳՈՐԾ.)

Թարգմանեց

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՆԱԶԱՐԵԱՆՑ

1908

Տփխիս
Յովհաննէս Մարտիրոսեանցի Տպարան.
1878

Հրատարակութիւն Զ. Գրիգորեանցի Կովկասեան Գրախանութիւ

3385
Պ-77 891.7
~~2788~~
4043
19
4043
13299

ՊՕԼՈՒԻՄ ՊԷՐԵԼ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

ԵՐԿՈՒ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

(Գ. ԳՈՐԾ.)

Թարգմանեց

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՆԱԶԱՐԵԱՆՑ

Տփխիս

Յովհաննէս Մարտիրոսեանցի. Տպարան.

1878

Հրատարակութիւն Զ. Գրիգորեանցի Կովկասեան Գրաքանութիւն:

22 JUL 2013

283

Дозволено цензурою. Тифлисъ, 12 Іюля 1878 года.

3085
40

Типографія И. Мартиросіанца, на Орбеліановъ улицѣ, д. № 5

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ։

«ՊՕԼՈՒԻՄՊԷՐԻԱԼ»-Ը հանել ենք "Новое Собраніе театральныхъ піесъ для дѣтскаго возраста. Санктпетербургъ, 1860.„ գրքից, որ շատ հատոր է և պարունակում է իւր մէջ 50 պիէս։ Այդ բոլորից մենք միայն «Պօլուիմպէրիալ»-ին առաւելութիւն տուինք, ուստի և միայն այդ թարգմանեցինք՝ միքանի աննշան փոփոխութիւններով։—

«ՊՕԼՈՒԻՄՊԷՐԻԱԼ»-Ը առաջին անգամ ներկայացուեցաւ Սիմֆէրօպօլում 1878 թ. փետրվարի 21-ին։ Ներկայացնողներն էին Սիմֆէրօպօլի Հայոց Ծխական Երկսեռ Դպրոցի վերակացուհին և աշակերտուհիները։ Ներկայացումն, որ եղաւ յօգուտ նոյն Դպրոցի՝ անսպասելի կերպով շատ յաջող անցկացաւ և արժանացաւ տեղական հայ-հասարակութեան գովասանքին և շնորհակալութեանը։

Ց. Նազարեանց.

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ.

ԵՐԷՑԿԻՆ, *այրի.*

ՍՐԲՈՒՀԻ, 12 *տարեկան*
ՀԱՑԿԱՆՈՒՇ, 10 *տարեկան* } *նորա զաւակները.*

ՄԱՐԻԱՄ, 15 *տարեկան,–նոյա հարս–սա բարեկամուհին.*

ԳԱՑԻԱՆԷ, 13 *տարեկան,–խեղճ ծոյլիկ.*

ՊՕԼՈՒԻՄՊԷՐԻԷԼ.

Կատակերգութիւն երկու արարուածով.

Ի. ԱՐԱՐՈՒԱԾ.

(Թատրոնի բեմը ներկայացնում է մէկ միջակ հարբասուութեան տէր քահանայի սենեակ։)

1. ՏԵՍԻԼ.

Սրբուհի և Հայկանուշ *(Զանասիրութեամբ կարում են։ Մեծ սեղանի վերայ վառում է լամպարը։ Առաւօտ է. վաղ։ Ժամացոյցը զարկում է 7 ժամը։)*

ՀԱՑԿԱՆՈՒՇ։ Ի՛նչ է. արդէն եօթ ժամն էլ խփեց։ Էլ շատ ժամանակ չկայ մինչև լուսանալը։ Բոյց ո՞ւր է մայրիկը։ Վաղուց է, որ նա արթնացել է։

ՍՐԲՈՒՀԻ։ Այո, նա շատ վաղ արթնացաւ և, մեր քունը չխանգարելու համար՝ կամաց-կամաց ներս մտաւ միւս սենեակը։ Էլ քունս չէր առնում, և ես տեսայ, ինչպէս նա վեր առաւ հայրիկի մեծ Աստուածաշունչը և մտաւ նորա առանձնասենեակը։ Այն ժամանակից սկսած՝ նա կարդում է այնտեղ և աղօթք է անում։ Բարի մայրիկ։ Նա մեզ համար է աղօթում։

ՀԱՅԿԱՆՈՒՇ։ Այո՛. այսօր էլ այնպէս վաղ զարթեցաւ։ Այդ բոլորը մե՛զ համար է։ Նա մեզ համար ընծաներ է պատրաստում նոր-տարութիւն։ Սիրելի՜ և բարի՜ մայրիկ։ Միշտ մեզ վերայ է մտածում. իսկ ինքը դեռ ևս թէյ էլ չի խմել։ Ինքնաեռն էլ այդէն եռ է գալիս։

ՍՐԲՈՒՀԻ։ Ինչո՞վ պէտք է վարձատրենք մենք նորա սէրը։ Ո՜հ, տէր Աստուած, օգնիր մեզ, որ մխիթարենք նորան։-Ի՞նչ ես կարծում, Հայկանուշ, ի՞նչպիսի ընծաներ է պատրաստել մեզ համար։ Յայտնի բան է, նորա ամեն պարգևը Թանկագին է ինձ համար. բայց այսուամենայնիւ, ես կ'ցանկանայի իմանալ, թէ ի՞նչպիսի բան պէտք է լինի։

ՀԱՅԿԱՆՈՒՇ։ Ի՞նչպէս իմանամ, թէ ի՞նչ է պատրաստուած մեզ համար։ Բայց ի՞նչ լաւ կ'լինէր, եթէ մայրիկն ընծայէր մեզ այն մետաքսեայ կտորը, որ մենք անցեալ օրը տեսանք խանութներում։ Ի՞նչ գեղեցիկ տօն օրուայ զգեստներ կ'ունենայինք։ Է՜հ, աւելորդ է նորա վերայ մտածելը։ Նա այնպէս թանկ է, որ ո՞վ կ'արժանացնի մեզ։-Շատ կարելի է, մեզ համար՝ մի-մի զոյգ կիսակօշիկ և մի-մի թաշկինակ է պատրաստուած։-Ա՜խ, ի՞նչ ուրախութիւն է։ Ի՞նչպիսի անհամբերութիւնով եմ սպասում ես երեկոյին։

ՍՐԲՈՒՀԻ։ Կարելի է, մայրիկն այդ բոլորի վերայ կ'աւելացնի նաև սաղմոն ու Աստուածաշունչը, որ մենք տօն օրերը կարդալու բան ունենանք։-Օ՜հ,

մենք ի՞նչպէս պէտք է շնորհակալութիւն անենք նորան։

ՀԱՅԿԱՆՈՒՇ։ Բայց մեր դրացուհի Մարիամը մեր հատը չի։ Նորա համար, իւր հոյակապ պալատում, ո՛վ գիտի, ինչպիսի շքեղ տօնակատարութիւն է պատրաստում նոր-տարուն դիմաւորելու։-Օ՜, նոր-տարին նորա մօտ մի շքեղ ու հարուստ կառքով է գալիս. իսկ մեզ մօտ՝ ոտով է գալիս։

ՍՐԲՈՒՀԻ։ Եւ այդուամենայնիւ, դատարկ ձեռներով չի գալիս։ Իւրաքանչիւրին իւր համեմատ։ Թէ պալատներում և թէ խրճիթներում, Աստուած ամեն տեղ երեխաներին ուրախութիւն է ուղարկում։ Ամենքին իւր հարստութեան համեմատ։ Մի՞թէ դու մոռացար, որ հանգուցեալ հայրիկը շատ անգամ ասում էր, թէ. «Աստուած այնպէս է սիրում ամեն մարդկերանց, ինչպէս քնքուշ մայրը սիրում է իւր զաւակներին։ Նա ոչոքի չի մոռանում։ Թէպէտ ամեն մարդ չի ստանալ ոսկի և թանկագին քարեր, այսուամենայնիւ, մեզնից իւրաքանչիւրը մասը կ'առնի նորա հայրական սիրուց։ Արեգակն ամենքին հաւասարապէս է տաքացնում և լուսաւորում։ Թէ հարուստներին և թէ խեղճերին։»

2. ՏԵՍԻԼ.

Նորա և Երէցկինը։

ԵՐԷՑԿԻՆ։ Բարով, որդիք։ Արդէն գործի վերջ էք։ Շատ դեղեցիկ։ Ձեր փոքրիկ մատներում այնպէս արագութեամբ են շարժւում ասեղները, կարծես ամեն ուժով վազում են նոր տարուն դիմաւորելու։ Ապա՛ ցոյց տուէք ինձ ձեր գործը։

ՍԲԲՈՒՀԻՆ և ՀԱՅԿԱՆՈՒՇԸ (միասին)։ Ա՜խ, մայրիկ։ Բարո՜վ, սիրելի՛ մայրիկ։ (Գրկում են նորան։)

ՀԱՅԿԱՆՈՒՇ։ Մենք արդէն վաղուց սպասում ենք քեզ։

ՍԲԲՈՒՀԻ։ Առանց քեզ, մայրիկ, կարծես, երկիւղալի է։ Մենք անհանգիստ էինք լինում քո մասին։

ԵՐԷՑԿԻՆ։ (Նստելով բազմոցի վերայ։) Իզո՜ւր, որդիք։ Ես շատ ուրախ էի։ Ես աղօթք էի անում, Աւետարան էի կարդում և մտածում էի ձեր հանգուցեալ հօր վերայ։

ՍԲԲՈՒՀԻ։ Եւ լաց էիր լինում։ Ա՜խ, ես ինքս էլ շատ անգամ մտածում եմ հայրիկի վերայ և միշտ լաց եմ լինում։

ՀԱՅԿԱՆՈՒՇ։ Ես էլ նոյնպէս։-Բայց սիրելի՛ մայրիկ. բաւական է, որքան լաց եղար. խնդրեմ, մի՛ լաց լինիլ։

ԵՐԷՑԿԻՆ։ Չէ, որդիք. ես չեմ լաց լինում,-Ես պատրաստ եմ ամեն բանի համբերելու, ինչ որ Աստուած կ'ուղարկի ինձ։ (Ձեռները դէպի երկինք բարձրացնելով։) Թող լինի Նորա սուրբ կամքը։ Թէպէտ իմ սիրտը խորին կերպով խոցուած է, այսուամենայնիւ, ես ոչ կամենում եմ գանգատուիլ և ոչ տրտնջալ։-Օ՜հ, ի՜նչէս քնքշաբար, ի՜նչպէս ջերմ սիրով էի սիրում ես ձեր հօրը։ Յիշենք անդադար Նորա անունը, Նորա բարեգործութիւնները. գիշերցերեկ աղօթենք Նորա համար, համոզուած լինելով, որ նա էլ աղօթում է մեզ համար Ամենաբարձրեալի գահի առաջևը։ (Ամենքը մի քանի րոպէ ընկնում են մտածողութեան մէջ։)

ՍԲԲՈՒՀԻ։ Մայրիկ, ես կ'գնամ թէյն կ'բերեմ. ինքնաեռը վաղուց եռ է գալիս։ (Դուրս է գնում։)

ԵՐԷՑԿԻՆ։ Գնա, հոգիս։ Իսկ ես կ'նայեմ ձեր գործը։ Տեսնենք, ձեզնից որն է լաւ կարել։ (Նայում է Սրբուհու կարը։)-Շատ լաւ։ Սրբուհին շատ անանման է կարում. Նորա դերձանը (թել) ուղիղ է, ինչպէս լարը։ (Վեր է առնում Հայկանուշի կարը։) Իսկ դո՛ւ, Հայկանուշ, լա՜ւ ես կարում, ուղիղ. միայն քո դերձանը քիչ է ոլորած. պէտք է աւելի խորը ոլորել։ (Սրբուհին բերում է ինքնաեռը. Հայկանուշի հետ միասին սփռոցը ծածկում են սեղանի վերայ. գնում են նորա վերայ ինքնաեռը, թէյնոցը, մատուցարանը, շաքարամանը և տաքանները։ Հայկանուշը նստում է իւր կարը շարունակելու. իսկ Սրբուհին բաժակներում թէյ է լցնում։ Ցեռոյ ամենքը վեր են առնում մի-մի բաժակ և խմում են թէյն։)-Էհ,

որդիք, ձեզ համար ուրախ օրը մոտենում է: Մեզանում սովորութիւն կայ նոր-տարուայ նախընթաց օրն ընծաներ տալ: Ես էլ Աստուծոյ տուածից արդէն պատրաստեցի ձեզ համար ընծաներ, որքան կարողացայ:

ՀԱՅԿԱՆՈՒՇ: Ա՜խ, մայրիկ. խնդրեմ, լաւ ընծաներ լինին և շատ-շատ:

ՍՐԲՈՒՀԻ: Մանաւանդ, որ այդ ընծաների մէջ մեզնից մէկի կամ միւսի համար ճիպոտ չլինի: (Ծիծաղելով) Հա՛ հա՛ հա՜:

ԵՐԷՑԿԻՆ: Դուք միշտ ինձ համար բարի որդիք էք եղած. ճիպոտը դեռ այն ժամանակն էլ հարկաւոր չէր, երբ դուք չափազանց փոքր էիք: Իսկ այժմ ամենևին հարկաւորութիւն չկայ նորա մէջ. և ես կամաչէի երբ և իցէ գործ դնելու այդ միջոցը՝ ձեզ ուղղելու համար: Սակայն չ'սպասէք նորան, ինչոր կար ձեր հանգուցեալ հօր կենդանութեան ժամանակը: Այն ժամանակ մենք հարուստ էինք: Նորա գործունէութիւնը և հոգատար սէրը առատութեան մէջ էին ձգել մեր տունը: Այժմ, թէպէտ չկայ առաջուայ առատութիւնը, պէտք է շնորհակալ լինինք Աստուծուց, որ մենք ոչ մի բանի կարօտութիւն չունինք: Որքան կարող եմ, կաշխատեմ հեռու պահել ձեզ կարօտութիւնից: Ես պատրաստեցի ձեզ համար ընծաներ իմ կարողութեան չափ: Նաա ուրախալի է ինձ վարձատրել ձեզ՝ ձեր բարեբարոյ վարքի, ձեր հնազանդութեան և ձեր աշխատասի-

բութեան համար: Մինչև մութն ընկնիլը, դուք պէտք է ցոյց տաք ինձ ձեր բոլոր ունեցածը. ես կամենում եմ տեսնել արդեօք ամե՞ն բան դուք պահպանել էք և կարգո՞վ էք պահել: Դուք նոյնպէս ամեն բան ձեր մասին պէտք է պարզութեամբ պատմէք ինձ, ինչպէս խոստովանուելու ժամանակը:

ՍՐԲՈՒՀԻ: Օ՜ մայրիկ. ես ուրախութեամբ ցոյց կտամ քեզ իմ փոքրիկ արկղը. դու կ'տեսնես, թէ ինչպէս կարգին է ինձանում ամեն բան և լաւ պահպանուած: Եւ ես շատ ուրախ եմ պատմելու քեզ ամեն բան, ինչոր նստած է սրտիս վերայ:

ՀԱՅԿԱՆՈՒՇ: Ես էլ նոյնպէս: Իմ խիղճը մաքուր է:

ԵՐԷՑԿԻՆ: Սակայն ես ձեզ առաջուց պէտք է ասեմ՝ որ նա, ով ուսումնարանում լաւ թուանշաններ է ստացել. նա՛, ով տանն էլ ուելի բարեբարոյ էր և աշխատասէր, մի խօսքով, ձեզնից նա՛, ով ամեն բանում լաւ է եղել միւսից,-կ'ստանայ ինձնից մէկ այնպիսի պարգև, որի հետ ոչմի ուրիշ պարգև չի կարող համեմատուիլ:

ՍՐԲՈՒՀԻ: Իսկ եթէ մենք երկուսս էլ հաւասարապէս լաւ եղած լինինք, այն ժամանակ, մեզնից որը կստանայ այդ թանկագին պարգևը:

ԵՐԷՑԿԻՆ: Այն ժամանակ, ես ձեզ համար շնորհակալութիւն կ'անեմ Աստուծուն. և իմ թանկագին պարգևը ընդհանուր կ'լինի ձեր երկուսիդ համար: Բայց սիրելի որդիք, մոռացեցէք. աշխարհիս վերայ որքան խեղճեր կան, որոնց համար նոր-տարին

ոչմի ուրախութիւն չի բերում։ Հարուստների համար բերում է՝ ուրախութիւն, քաղցրեղէն, նոր զգեստներ.-իսկ խեղճերի համար՝ արտասուք, չոր հացի կտոր և պատառոտուած շորեր։ Մտածեցէք սորա վերայ և որքան փոքր լինին իմ ընծաները, այսուամենայնիւ, ընդունեցէք, հնորհակալութիւն անելով Աստուծուն, որ ինձ կարողութիւն տուեց դէթ այս փոքրիկ ուրախութիւնը պատճառելու։ Միևնոյն ժամանակը չմոռանաք աղքատներին և տուէք նոցա ձեր աւելորդը։

ՍՐԲՈՒՀԻ։ Օ՛օ, երանի՜ ես աւելի շատ ունենայի աւելորդ բաներ։ Ողորմութիւն տալն աւելի ուրախալի է, քան պարգևներ ստանալը։

ՀԱՅԿԱՆՈՒՇ։ Ճշմարիտ է։ Մայրիկ մտածենք միասին, թէ ի՞նչ տանք խեղճերին։

ԵՐԷՑԿԻՆ։ Լա՛ւ, հոգեակս, մտածենք։ Բայց ես մի խեղճ այրի եմ. իսկ դուք՝ որբեր։ Փառք Աստուծոյ, որ ձեր հօր մահից յետոյ մենք կատարեալ աղքատութեան մէջ չ՚ընկանք։ Մենք չենք կարող շատ տալ. բայց ինչոր կարող ենք տալ, պէտք է խոհեմութեամբ տանք։ Զափաւոր եղէք, որովհետև չափաւոր մարդուն միշտ այնքան կ՚մնայ, որ կարող է մեզ հանել ողքատին։ Հեռատեսութեամբ տուէք. իւր ժամանակին տալը ճշմարիտ բարեգործութիւն է. առածն էլ է ասում. «Թանկ է ողորմութիւնը չքաւորութեան ժամանակը»։ Բայց, վեր առէք թէ՝ն։ Ահա. այս լոպէին Մարիամն անցկացաւ լուսամուտի

մոտովը. անկասկած, նա մեզ մոտ է գալիս։ (Երեխայքը բոլորը տանում են միւս սենեակը։)

3. ՏԵՍԻԼ.

Նորա և Մարիամը։

ՄԱՐԻԱՄ։ (Ուրախ-ուրախ ներս է մտնում։) Բարո՜վ, երէցկին. Սրբուհի, Հայկանուշ, բարով։

ԵՐԷՑԿԻՆ։ Նստեցէ՛ք, օրիորդ։

ՄԱՐԻԱՄ։ (Նստելով) Ա՜խ, ի՞նչպէս ուրախ եմ ես այսօր։-Արդեօք վաղ չեմ եկել ձեզ մոտ։ Ներեցէ՛ք, երէցկին, եթէ ես ձեզ խանգարեցի. բայց, որ գիտենաք, ի՞նչպէս ցանկանում էի տեսնուիլ ձեր ամենիդ հետ...։

ՍՐԲՈՒՀԻ։ Բարի՜ Մարիամ, որքան սիրում եմ քեզ։

ԵՐԷՑԿԻՆ։ Մի՛ք նեղանալ, օրիորդ։ Այնքան էլ շատ վաղ չի. մենք վաղուց ենք արթնացել։

ՀԱՅԿԱՆՈՒՇ։ Ես ու քոյրս երկար ժամանակ կարում էինք միմեանց առաջը կտրելու։ (Տեղից վեր կենալով) Մարիամ, չե՞ս կամենալ քեզ համար ինձոր բերեմ։

ՄԱՐԻԱՄ։ Ո՛չ. սիրելի Հայկանուշ, շնորհակալ եմ. դեռ շատ վաղ է. ես նոր վերկացայ անկողնից և թէյ խմեցի։ Զարմանում եմ ձեր աշխատասիրութեան վերայ և չեմ հասկանում, թէ ի՞նչպէս կարելի

է համ ուտել, համ աշխատել, երբ սպասում ես այսպիսի մի ուրախ երեկոյի։ Պատառը բողազումս ներս չի գնում։ Մայրիկս ինձ զբոսով թէյ խմացրեց և թոյլ տուեց մինչև երեկոյ։ Այսօր ես ոչմի դաս չունիմ։ բոլոր ուսուցիչներիս ասել ենք, որ չգան, որովհետև ես ոչինչ չէի կարող հասկանալ։ Ես այնպէս շփոթուած եմ, որ չեմ կարող ոչմի գործով պարապել։

ԵՐԷՑԿԻՆ։ Այդուամենայնիւ, ուրախութիւնը չպէտք է գործին խանգարի։ Հանգստութիւնը միայն աշխատանքից յետոյ է քաղցր. երբ լաւ-օրինաւոր աշխատում ես, այն ժամանակ զուարճութիւններն էլ աւելի ուրախալի են լինում։ Տեսէք, իմ աղջկերքն ասում են՝ որ աշխատանքը նոցա համար կարճացնում է ժամանակը, որ, երբ մարդ զբաղուած է լինում, ժամերը թռչում են և, որ գործի նստած ժամանակը դեռ ևս չեն կարող յետ նայել, ահա, կ'գայ այն ցանկացած երեկոն, որին նոքա ամբողջ տարին սպասում էին։

ՄԱՐԻԱՄ։ Մի յանդիմանէք ինձ, սիրելի երէցկին։ Ահա, ես կաշխատեմ ձեզ մօտ, և ջանասիրութեամբ կաշխատեմ։ Չէ՞ որ ես ամբողջ տարին ջանասէր էի. և դորա համար այսօր կամենում եմ ուրախութիւն անել։ Մայրիկս խոստացաւ ինձ այսօր երեկոյին մի դեղեցիկ տօնակատարութիւն պատրաստելու այն բանի վարձատրութեան համար, որ ես սորանից ամիս ու կէս առաջ՝ մի հարուստ ողորմութիւն տուեցի մի խեղճ պառաւ կնոջ։

ՀԱՅԿԱՆՈՒՇ։ Պատմի՛ր, Մարիամ, ի՞նչպէս պատահեցաւ։ Ո՞րտեղ գտար դու այդ պառաւին։

ՄԱՐԻԱՄ։ Նոյեմբերի 21-ին էր, իմ ծննդեանս բութեան օրը։ Ես դայեակիս հետ եկեղեցի էի գնում, պատարագի։ Դու գիտես, որ մեր տան մեծ գաւթումը փայտ էին տաշում, և այնտեղ շատ փայտի կտորտանք ու տաշեղ կար հաւաքուած։ Մայրիկս հրամայեց, որ շուտով տանեն այն տաշեղները, որ գաւիթը մաքրուի։ Իսկ դռնապանը թոյլ էր տուել մի պառաւ կնոջ, որ օրքան կամենար, փայտ ու տաշեղ հաւաքէր իւր վառարանի համար։ Խեղճ պառաւը մի ահագին պարկ տաշեղով լցրեց և մի կերպով դրեց ուսերի վերայ։ Բայց բեռն այնքան ծանր էր, որ նա չէր կարողանում տեղից շարժուիլ։ Նա անքում էր բեռան տակը, լաց էր լինում. և այդուամենայնիւ, չէր կամենում դէն ձգել պարկը, ասելով, որ ոչինչ չունի վառարանը վառելու համար, և փայտ առնելու համար էլ փող չունի։ Ես սկսեցի հարցնել նորան իւր ապրուստի մասին, և նա, Աստուած գիտի, թէ ինչ պատմեց ինձ։ Թէպէտ ամէն մարդու չպէտք է հաւատալ. բայց ես շատ ցաւեցայ։ Ես հրամայեցի նորան սպասել. տուն վերադարձայ և իմ քսակից հանեցի երեք արծաթեայ ռուբլանոց. երեքն էլ փայլուն, նո՛ր։

ՍԲԲՈՒՀԻ։ Եւ այն խեղճ պառաւի՞ն տուիր։

ՄԱՐԻԱՄ։ Ցայտնի բան է։ Եւ, բացի դորանից՝ մայրիկս հրամայեց դռնապանին, որ տաշեղով լցրած

պարկը տանէր պառաւի տունը։ Չէք կարող երևակայել թէ ինչպէս ուրախացաւ խղճուկ կինը։ Նա, համարեա, խելագարուեցաւ. աղօթք էր անում, օրհնում էր ինձ։ Այդ անասելի կերպով ինձ դուր էր գալիս. և մայրիկս, տեսնելով, որ ես սրտաշարժուած էի, գովում էր ինձ։

ԵՐԷՑԿԻՆ։ Եւ գովելու պատճառ ունէր։ Դուք բարի գործ կատարեցիք, սիրելի Մարիամ։ Աստուած ձեզ կ'վարձատրի դորա փոխարէն։ Միշտ կարեկից եղէք դէպի խեղճերը. Աստուած ձեզ միջոց է տուել նոցա օգնելու։ Բայց ո՞վ էր արդեօք այն պառաւը և ո՞ւր գնաց նա ձեր փողերն ստանալուց յետոյ։

ՄԱՐԻԱՄ։ Ճշմարիտն ասեմ, չ'գիտեմ։ Ես չը-հարցրի պարկը տանող դռնապանին, թէ նա ո՞րտեղ էր բնակւում։ Ես միայն կամեցայ օգնել նորան և մխիթարել։ Մի տեսնէիք, ի՞նչպէս ցաւալի կերպով լաց էր լինում։ Բայց այն օրից սկսած՝ ես չ'եմ տեսել նորան և ոչինչ չ'գիտեմ նորա մասին։

ԱՐԲՈՒՀԻ։ Ա՜խ, ի՞նչ ուրախալի բան է՝ խեղճերին օգնել, լաւութիւն անել մարդկերանց։

ՄԱՐԻԱՄ։ Հէնց այն ժամանակ մայրիկս ասաց. «Ես չ'եմ մոռանալ այն, ինչորդ դու այսօր արեցիր։» Եւ ահա, այդ պատճառով այս երեկոյին ինձ մի ուրախ տօնակատարութիւն է սպասում։

ԵՐԷՑԿԻՆ։ Ես գիտեմ, թէ որքան ուրախութիւն է ձեր մօր համար՝ վարձատրել ձեզ պէս բարի աղջկան։—Սիրելի որդիք, այժմ ես հեռանում եմ ձեզ-

նից. ես դեռ ևս շատ գործ ունիմ, ամեն բան պէտք է երեկոյեան պատրաստ լինի. ուրեմն, առ այժմ մնա՞ք բարով։ (Դուրս է գնում։)

4. ՏԵՍԻԼ.

Սրբուհի, Հայկանուշ

և Մարիամ։

ՀԱՅԿԱՆՈՒՇ։ Գնա՛, բարի՞ մայրիկ. Տէր ընդ քեզ։ Ինձ յայտնի է, թէ նա ի՞նչքան գործ ունի։ Նա մեզ համար նոր տարութիւն ընծաներ է պատրաստում։

ՄԱՐԻԱՄ։ Ինչ և իցէ. եկէք կարենք։ Ես կ'օգնեմ ձեր կարին։ Դուք գիտէք, որ ես լաւ եմ կարում. ինքներդ էք սովորեցրել ինձ։ Պէտք է աշխատել. ձեր մօր տուած խորհուրդն ինձ համար օրէնք է։ Ի՞նչքան սիրում եմ նորան։ Ասում է աշխատանքը կարճացնում է ժամանակը։ Ինձ թոյլ է տրուած մինչև երեկոյ ձեզ մօտ մնալ. և, երբ ուշը պատրաստ կ'լինի, այն ժամանակ մայրիկս մեր եռևից մարդ կ'ուղարկի։ Նա անպատճառ կամենում է, որ դուք էլ գաք մեր տուն։ Իսկ մինչև այն ժամանակը ես շատ ուրախ կ'լինեմ ձեզ մօտ մնալով։

ՀԱՅԿԱՆՈՒՇ։ Լսիր, սիրելի Մարիամ. եթէ կամենում ես կարել խնդրեմ՝ իմ կարին օգնես։ Իսկ ես պէտք է գնամ խոհանոցը. այսօր իմ աշխատելու-

օրն է: (Իւր կարը տալիս է Մարիամին:)

ՍԲԲՈՒՀԻ: Լաւ, գնա: Բայց աշխատիր, որ ճաշին մի լաւ բան եփես մեզ համար: (Հայկանուշը դուրս է գնում:)

5. ՏԵՍԻԼ.

Սրբուհին և Մարիամը (Նստում են կարի:)

ՄԱՐԻԱՄ: Սրբուհի, սիրելիս: Եթէ դու գիտենայիր, թէ որքան ես ուրախ եմ այսօր: Ինձ համար այս էլ է ուրախութիւն, որ ես ու դու մենակ մնացինք: Ես քեզ շատ եմ սիրում:

ՍԲԲՈՒՀԻ: Ես էլ եմ սիրում քեզ բոլոր սրտով, սիրելի Մարիամ:

ՄԱՐԻԱՄ: Ես շատ եմ սիրում Հայկանուշին, և միշտ ուրախ եմ լինում նորա հետ խաղալիս. բայց քեզ չափազանց շատ եմ սիրում: Դու, կարծես, աւելի մեծիկ ես իմ սրտին: Դու միշտ կարողանում ես գուշակել իմ տխրութեան պատճառը, հեզութեամբ ուղղում ես իմ պակասութիւնները և բարի բաներ ես սովորեցնում:

ՍԲԲՈՒՀԻ: Իսկ դու, սիրելի Մարիամ, միշտ ինձ վերայ ես մտածում: Դու բաժանում ես ինձ հետ քո բոլոր զգացմունքները: Քո հաւատարիմ բարեկամութիւնն ինձանում շատ պակասութիւններ է ուղղել և ինձ շատ է բաղձաւորացրել:

ՄԱՐԻԱՄ: Օ՜, լռիր: Բաւական է, որքան գովեցիր ինձ. եթէ ոչ՝ ես, յիրաւի, կ'հաւատամ, որ շատ բարի եմ: — Ուրիշ ոչինչ չէի խնդրիլ Աստուծուց, միայն, որ ես էլ քեզպէս լինէի: Ես ուրիշ բան չեմ ցանկանում: (Նոքա կանգնում են և գրկում են միմեանց: Մարիամը, անթարթ աչքով նայելով Սրբուհու երեսին, ասում է.) Սրբուհի, ի՜նչ պատահեցաւ քեզ: Ինչո՞ւ դու այդպէս աղբատութեամբ նայում ես ինձ վերայ:

ՍԲԲՈՒՀԻ: Ես կամենում էի մի բան թաքցնել քեզնից. բայց գգում եմ, որ անկարելի է:

ՄԱՐԻԱՄ: Ո՛չ, Սրբուհի. ոչինչ մի ծածկիլ ինձնից: Իզուր չէ, որ ես հետաքրքրւում եմ իմանալու ամեն բան, ինչոր քեզ է վերաբերում: Դու գիտես, ինչպէս սիրում եմ քեզ: Չեմ կարող արդեօք օգնել քեզ:

ՍԲԲՈՒՀԻ: Կարող ես, ո՜հ, յայտնի բան է, կարող ես: Լսիր. ես բոլորը կ'պատմեմ քեզ: Բայց պէտք է հեռուից սկսեմ. դու դեռ ոչինչ չգիտես:

ՄԱՐԻԱՄ: Դեհ, շուտ: Պատմի՛ր բոլորը:

ՍԲԲՈՒՀԻ: Իմ հօր ժողովրդի մէջ, (ցոյց է տալիս մատով) ահա՛, այս անկիւնաւոր մեծ տանը, ամենասաստրին բնակարանում, որ մինչև կէսը գետնի մէջն է, բնակւում էր մի ոստայնանկ (ТКАЧЪ) իւր ընտանիքով. այսինքն՝ իւր մօր, կնոջ և աղջկայ հետ: Նա և իւր կինը աշխատում էին գործարանում. այնպէս, առանց մի բանի կարօտութիւն քաշելու՝ պա-

հում էին իրեանց ընտանիքը: Մնացին՝ պառաւ մայրը և 13 տարեկան աղջիկ Գայիանէն: Ցաւալի էր տեսնել այս տարաբախտ ընտանիքը: Մէկ օրուայ մէջ երկու դաղաղ դուրս տարան: Մենք ներկայ էինք թաղմանը: Ի՞նչպէս հիմա էլ տեսնում եմ խեղճ Գայիանէին իւր հօրն ու մօր գերեզմանի մօտ: Ի՞նչպէս լսում եմ այս բոպէիս, թէ նա ինչ յուսահատութիւնով կանչում էր նոցա: Ցետոյ, տարաբաղդ աղջիկը հեռացաւ անպատասխան գերեզմանից և, տուն վերադառնալով, սկսեց աղօթել արտասուք թափելով: Նա «Հայր մեր»-ն էր ասում իւր մէջ, միայն բարձր, և հեծկլտալով բացագանչում էր. «Թող լինի Քո կամքը»:-Երկար ժամանակ նա ոչինչ չէր տեսնում: Վերջապէս, մի փոքր ուշքը գլուխը բերելով, տեսաւ, որ ես կանգնած եմ իւր մօտ: Նա փաթաթուեցաւ պարանոցովս, և մենք երկար ժամանակ (երկու ձեռով ծածկում է երեսը և լաց լինում.) լաց էինք լինում միմեանց դրկած:

ՄԱՐԻԱՄ: Բայց ինչու դու ոչինչ չես ասել ինձ դորա մասին: Կանչենք նորան. ես կամենում եմ մի բան ընծայել նորան նոր-տարուն:

ՍԲՈՒՀԻ: Ո՛չ. այդ կարող է վերաւորել նորան: Նա շատ խեղճ է, բայց իւր ձեռքի աշխատանքովն է ապրում և ոչքից ողորմութիւն չի ընդունում:

ՄԱՐԻԱՄ: Բայց այդ խղճուկ որբը մենակ չի լինիլ ապրիլիս:

ՍԲՈՒՀԻ: Ո՛չ. նա իւր մեծ-մօր հետ է բնակւում, և մեծ սիրով մեն է գալիս զատամեալ պառաւի հետ: Բայց դեռ լսիր: Մօտ օրերումս ես կը-կին կերակուր տարայ նոցա համար, որ ուղարկեց մայրիկս: Խեղճ Գայիանէն լաց էր լինում. բայց ինձ չէր կարողանում ասել, թէ ինչու էր լաց լինում: Իսկ ես ձեռք չվերառայ նորանից, մինչև վերջապէս նա տարաւ ինձ իւր հանգուցեալ հօր աշխատութեան մեքենայի (станокъ) վերայ և ցոյց տուեց այն՝ արտասուքն աչքերին: Ես տեսայ սպրտակ քաթանի սկսուածքը կապոյտ շերտերով: «Հայրս կամենում էր ինձ համար նոր-տարութիւն նոր շոր գործել», ասաց Գայիանէն տխրութեամբ: «Այս բոլորը մայրիկս ինքն է հիւսել և ներկել: Ի՞նչպէս ջանասիրութեամբ նա սկսել էր աշխատել ինձ համար: Այժմ երկուսն էլ հանգստանում են խոնաւ հողի տակը: Ո՛ր կողմը նայում եմ, ամէն տեղ երեխայքը ուրախութեամբ դիմաւորում են տօներին և նոր-տարուն. իսկ ինձ համար ո՛չ տօն կայ, ո՛չ ուրախութիւն», շարունակեց նա հեծեծալով. «ինձ համար միայն արտասուքն է բաժին մնացել: Բայց ինձ ուրախութիւնն էլ չի հարկաւոր: Ո՞հ, եթէ ես կարողանայի դուրս հանել նորանց գերեզմանից և կրկին տուն բերել...» Ա՜խ, Մարիամ: Ես քեզ ոչինչ չասացի Գայիանէի մասին. բայց նա այնքան բոպէ չէր դուրս գալիս իմ մտքից: Ես շատ անգամ տեսութիւն էի գնում նորան և մտածում էի, թէ ինչով կարող

3085
40

ՊԵՏ. ՀԱՆՐ. ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ-ССР

էի ուրախացնել նորան։ Վերջապէս, ահա, ինչ ծա-
գեցաւ գլխումս։ Ես գնացի փողոց, մի ծանօթ վա-
ճառականից գնեցի ճիշդ մէկ այնպիսի սպիտակ քա-
թանի կտոր կապոյտ շերտերով, ինչպէս այն, որ ես
տեսայ նորա հօր մեքենայի վերայ. և տուեցի դեր-
ձակին՝ իմ չափով Գայիանէի համար շրջազգեստ
կարելու։ Թէպէտ նա մի տարով մեծ է ինձնից,
բայց ճիշդ իմ հասակի է։ Այսօր կ'բերեն այն շրջա-
զգեստը, և ես պէտք է խանութպանին ու դերձակին
վճարեմ կտորի և կարելու գինը։ Ես նոցա խոստա-
ցել եմ, որ այսօր փողը տանեմ։

ՄԱՐԻԱՄ։ Փող չ'ունիս։ Ա՛ռ ինձնից. ես ուրա-
խութեամբ կ'տամ քեզ։

ՍՐԲՈՒՀԻ։ Ո՛չ. ի՞նչ ես ասում. ես չեմ կամե-
նում փոխ առնուլ։ Բայց խնդրում եմ քեզ, մանրիր
այս։

ՄԱՐԻԱՄ։ (Առնելով ձեռքից փողը և զարմա-
նալով) Ի՞նչ։ Դու ոսկի էլ ունիս։ Չէ, Սրբուհի. ես
չ'գիտէի, թէ դու այդպէս հարուստ ես։

ՍՐԲՈՒՀԻ։ Ա՜խ, այս պօլուիմպէրիալից ես հե-
ռանում եմ, ինչպէս իմ հոգուց։ Բայց վեր առ և
ոչինչ չասես սորա մասին՝ ոչ մօրս և ոչ Հայկանուշին։

ՄԱՐԻԱՄ։ Ես ճանաչում եմ այս։ Սա այն հին
պօլուիմպէրիալն է, որ ընծայեց քեզ տէր-Հայրը
մեռնելու ժամանակ։ Ո՜հ, յայտնի բան է. նա տուա-
ջուց գիտէր, որ դու սորան բարի բանի վերայ գործ
կ'ածես։ Եւ չսխալուեցա՜։ Բայց ես չեմ մանրիլ։

Ասա՛, որքան փող է հարկաւոր քեզ։ Ես այս բոպէիս
կ'բերեմ։

ՍՐԲՈՒՀԻ։ Ո՛չ, Մարիամ. մի խլեր ինձնից իմ
ուրախութիւնը։ Մանրիր իմ պօլուիմպէրիալը։ Եթէ
դու չ'ես կամենում մանրել, այն ժամանակ ես կ'տա-
նեմ կ'տամ խանութպանին և նորա մօտ կ'մանրեմ։
Յետոյ կ'գնամ դերձակի մօտ, կ'վերառնեմ շրջա-
զգեստը և կ'տանեմ, Գայիանէին կ'տամ։ Բայց ես չ'էի
կամենում, որ այս պօլուիմպէրիալն ուրիշի ձեռքն
ընկնէր։

ՄԱՐԻԱՄ։ Համեցէք, իմ հրեշտակ Սրբուհի։
Տուր ինձ այդ ոսկին. ես քեզ արծաթ կ'բերեմ։
Միայն մի բան եմ խնդրում.-շրջազգեստը Գայիանէին
տանելիս, ինձ էլ հետդ տար. ես ցանկանում եմ
տեսնել նորա ուրախութիւնը։

ՍՐԲՈՒՀԻ։ Բայց Գայիանէն ոչմի կերպով չ'պէտք
է իմանայ, թէ ով է ընծայել նորան շրջազգեստը։
Եթէ ոչ՝ կ'քանդուի իմ բոլոր գաղափարը և իմ ու-
րախութիւնը կ'թունաւորուի։ Լսիր։ Ճաշից յետոյ
Գայիանէն և իւր մեծ մայրը կ'գնան բերելու այն
փայտը, որ նոքա գնել են իւրեանց աշխատած փո-
ղով։ Այդ միջոցին ես ծածուկ ներս կ'մտնեմ նոցա
սենեակը և սեղանի վերայ կ'դնեմ գգեստը մի թղթի
կտորով, որի մէջ պէտք է գրուած լինի. «Աստու-
ծոյ ընտանիքի մէջ որբեր չկան։ Հօրդ ըս-
կըսածն այժմ վերջացաւ. Աստուած նոր-
տարուայ հետ ուրախութիւնք ուղարկում

քեզ։» Ահա, թէ ինչ պէտք է գրուած լինի այն թղթումը։

ՅԱՐԻԱՄ։ Չեմ հասկանում, թէ ինչու Գայիանէն չ'պէտք է գիտենայ, թէ ով է ընծայում նորան։ Գիտեմ, նա որքան շնորհակալ կ'լինի քեզնից. և դու որքան կ'ուրախանաս, տեսնելով նորա շնորհակալութիւնը։

ՍԻԲՈՒՀԻ։ Հէնց այդ է, որ ես չեմ կամենում։ Ես չեմ ուզում, որ ուրիշները գիտենային այն, ինչոր ես արել եմ։ Աւետարանում գրուած է. «Թող չիմանայ քո աջը, թէ ինչ է անում քո ձախը։ Թող քո ողորմութիւնը լինի ծածուկ. և քո հայրը, որ տեսնում է ծածուկ, կ'տայ քեզ յայտնապէս։» Մարիամ, ինձ համար արդէն այն էլ զրկանք է, որ դու գիտես. բայց ինձ հարկաւոր է քո օգնութիւնը։ Ինձ համար մեծ ուրախութիւն կ'լինի, որ մտածեմ ինձ ու ինձ, թէ ուրախացրի խեղճ Գայիանէին և, որ նա չի կարողանում իմանալ, թէ ով է ընծայել իւրեան։ Ի՞նչքան կ'ուրախանամ ես, երբ կ'սկսի ցոյց տալ ինձ իւր զգեստը և կ'խօսի իւր զարմացման վերայ։

ՄԱՐԻԱՄ։ (Ձեռները դէպի Սիբուհին պարզելով.) Դու կատարեալ հրեշտակ ես։ Ես ամաչում եմ քեզ վերայ նայելու։ Օ՛հ, ես որքան փառասէր եմ։ Ես սիրում եմ տալ. բայց նոյնպէս սիրում եմ, որ ուրիշները գիտենային, թէ ես տալիս եմ և, որ ինձ գովէին։ Եթէ ես մի որև է բարեգործութիւն եմ

անում, միշտ առաջ ես եմ պատմում իմ արածը։ Իսկ դու. ծածկաբար ներս ես մտնում աղքատութեան բնակարանը, սրբում ես արտմութեան արտասուքը, կարեկցութեամբ ականջ ես դնում տարաբաղձների գանգատներին և մխիթարում ես նորանց։ Ես կարող եմ բռներով ողորմութիւն սփռել, առանց մի պակասութիւն զգալու. իսկ դու՝ տալիս ես քո վերջին ունեցածը։ Ի՜նչ մեծ զանազանութիւն կայ մեր մէջը։ (Աւելի մտենալով.) Բայց մի՛ դադարիլ ինձ սիրելուց։ Ես կամենում եմ ամեն բանում քեզ նմանուիլ, կամենում եմ ամեն բանում քո խորհուրդներին հետևիլ, ընդունել քեզնից ամեն լաւ բան։

ՍԻԲՈՒՀԻ։ Բաւական է, վերջացրու։ Ես արժանի չեմ այդ բոլոր գովասանքներին։ Միայն, լսի՛ր. ես էլի՛ մի խնդիր ունիմ քեզ մօտ։ Գիտենալով, որ ես ու դու բարեկամ ենք, Գայիանէն իսկոյն կ'եզրակացնի, որ ես նորա մասին խօսել եմ քեզ հետ և կ'գայ քեզ շնորհակալութիւն անելու....։ Մարիամ, աղաչում եմ, ընդունի՛ր նորա շնորհակալութիւնը։ Բարեկամների մէջ երկար քննողութիւն չ'պէտք է լինի։ Թող իմ արած բարի գործը քո արած համարեն։ Քո բարեգործութիւնն ամենքին յայտնի է։ Բնական է, որ այս դիպուածում ևս քեզ վերայ կարծիք կ'տանեն։ Ոչքի չ'յայտնես բանի էութիւնը։

ՄԱՐԻԱՄ։ Դու ինձնից չափազանց շատ ես պահանջում։ Բայց թող քո ասածը լինի։ Ես կ'լռեմ, կ'ընդունեմ Գայիանէի շնորհակալութիւնը. բայց հո-

գուս խորքումը կ'խոնարհուիմ քո առաջևը, ինչպես մի հրեշտակի առաջ, որ չափազանց բարձր է ինձնից։

ՍՐԲՈՒՀԻ։ Ես էլ պատրաստ եմ կատարելու քո բոլոր կամքը։ Պատրաստ եմ մեռնել քո փոխանակ։ Այժմ, գնանք բերենք Գայիանէի շըջազգեստը։ (Դուրս են գնում, միմեանց ձեռքը բռնած։)

Վարագոյրն ելնում է։

II. ԱՐԱՐՈՒԱԾ

1. ՏԵՍԻԼ։

(Մի փոքրիկ, համեստ դահլիճ երէցկնոջ տանը։ Բեմի խորքում դրուած է երկու փոքրիկ սեղան, երեսներին սփռոցներ քաշուած։ Մէջ տեղը, բազմոցի առաջև, մեծ սեղանի վերայ դրուած է մի կողով՝ երեսը ծածկած և մի փոքրիկ զանգակ։)

ԵՐԷՑԿԻՆ; (միայնակ)։ Ահա. այս էլ հին տարուայ վերջին երեկոն։ Վաղը գալիս է նորը։ Օ՜, անյայտ ժամանակ։ Ի՜նչպիսի երկիւղով եմ հանդիպում քեզ։ Կար ժամանակ, որ ես էլ իմ աղջկերանց պէս, ուրախութեամբ սպասում էի քեզ։ Կար ժամանակ, որ ես էլ խաղաղ սրտով, ոչինչ բանի վերայ չէի հոգում, բացի այն ընծաներից, որ բերում էր ինձ համար նոր-տարին։ Ի՜նչպիսի անհամբերութիւնով ես էլ կանգնում էի այն փակուած դռների մօտ, որոնց ետևը ծնողական քնքուշ սէրը հոգս էր տանում իմ մանկական ուրախութիւնների վերայ։ Շնորհակալ եմ Աստուծուց. այժմ ես էլ կարող եմ ուրախութիւն պատրաստել իմ զաւակների համար։ Ես էլ կ'ուրախանամ նոցա հետ միասին։ Բայց՝ իմ ուրախութիւնը թունաւորուած է։ Սրբուհին, իմ սրտի սիրելին՝ վշտացրեց ինձ։ Նա, որ այն-

պիսի հոգատարութեամբ պահպանում էր ամեն բան, ինչոր պատկանում էր իւր հօրը...: Ես կամենում էի տալ նորան հայրական Աստուածաշունչը. բայց այժմ այդ չի կարելի. դա անիրաւացի կ'լինէր: Ի՞նչպիսի անհաւատալի թեթեւամտութեամբ նա կորցրեց իւր հօր ընծայած պօլիսիպերիալը. նորա վերջին ընծան, որ հրամայեց նորան պահել սև օրուայ համար: Մեր կարողութեանը նայելով՝ այդ գումարն էլ նշանաւոր է, մի կողմ դնելով հայրական ընծայի մեծ նշանակութիւնը: Չէ. նորա թեթեւամտութիւնն աններելի է...:

2. ՏԵՍԻԼ.

Երէցկինը և Մարիամը.

ՄԱՐԻԱՄ: Երէցկին, թոյլ տուէք, որ օգնեմ ձեզ՝ սեղանների վերայ դարսելու այն ընծաները, որ դուք պատրաստել էք ձեր աղջկերանց համար: Նոքա միւս սենեակումն են և զբաղում են անհամբերութիւնից: Ցեռոյ, երբ դուք ամեն բան կ'վերջացնէք, յոյս ունիմ, որ չէք մերժիլ Սրբուհու և Հայկանուշի հետ միասին շնորհ բերելու մեր տունն և սպասելու սաաներկու ժամին, որ միասին հանդիպենք նոր-տարուն: Սրբուհին յանձնեց ինձ, որ սորա մասին խնդրեմ ձեզ խոնարհաբար: Դուք լաւ գիտէք, որ տանց ձեզ և տանց ձեր աղջկերանց՝ ինձ համար ոչնչ չի:

ԵՐԷՑԿԻՆ: Շնորհակալ եմ ձեր սիրոյ մասին, սիրելի Մարիամ: Ես չեմ փչացնիլ ձեր տօնը, և անպատճառ կ'գամ ձեզ մօտ երկու աղջկերանց հետ: Դեռ օգնեցէք ինձ տեղաւորելու այստեղ իմ ընծաները: (Նա բաց է անում կողովը և, հանելով նորա միջից իրերը, ասում է.) Առաջ դարսենք ամեն բան Հայկանուշի սեղանի վերայ: (Ցեռոյ մէկ-մէկ հանում է. Մարիամը ձեռքից առնելով՝ նայում է և դնում է փոքրիկ սեղաններից մէկի վերայ:) Ահա, նորա համար՝ մի վարդագոյն զգեստ, սև կիսակօշիկներ, թիկնոց, որ ես ինքս եմ կարել. մի գեղեցիկ սպիտակ թուղթ, մի կապ մատիտ, մի կապ նոր գրիչ և մի սաղմոս: Սրբուհու համար էլ այսպէս է պատրաստուած: Բայց Հայկանուշին, բացի սորանից՝ կ'տամ նաև հայրական Աստուածաշունչը:

ՄԱՐԻԱՄ: Ի՞նչպէս թէ Հայկանուշին...: Ինչու Սրբուհուն չէք տալիս...

ԵՐԷՑԿԻՆ: Ես ցաւով պէտք է ասեմ, որ Սրբուհին արժանի չի մէկ այսպիսի գանձի տէր դառնալու:

ՄԱՐԻԱՄ: Ի՞նչ, երէցկին. ի՞նչ էք ասում: Անիրաւաբար մի՞ք վարուիլ Սրբուհու հետ: Ի՞նչ պէտք է անէր նա. այն հրեշտակ Սրբուհին: Ինչու համար էք բարկանում նորա վերայ:—Նա շատ կը-վշտանայ:

ԵՐԷՑԿԻՆ: Հաւատացէք, որ ինձ համար էլ պակաս վշտալի չի նորանում յանցանք տեսնելը: Բայց, ինքներդ դատեցէք: Ձեզ, ինչպէս Սրբուհու բարե-

կամ՝ ես կարող եմ բոլորը պատմել։ Երևակայեցէք. նա կորցրել է այն պօլուիմպէրիալը, որ տուել Նորան հանգուցեալ հայրը մահից մի քանի օր առաջ։— Ցանկանալով տարուայ վերջը վարձատրել աղջկերանց իւրեանց արժանաւորութեան համեմատ, ես տեսայ նոցա բոլոր ունեցածը։ Առաջ նայեցի նոցա տետրակների վերայ ուսուցչի նշանակած թուանշանները՝ նոքա երկուսն էլ հաւասարապէս լաւ են սովորել։ Յետոյ՝ նոցա կարը,-նոքա երկուսն էլ կարում էին լաւ և ջանասիրութեամբ։ Նոքա այնպէս լաւ են սովորել գործել ու կարել, որ աւելի չէր կարելի սպասել։ Ես միշտ բաւական եմ մնացել նոցա վարքից. նոցա բոլոր իրերը ժողովուած էին և կարգով։—Միայն Սրբուհուն պակաս էր իւր պօլուիմպէրիալը։ Երբ ես սկսեցի հարցնել, թէ ինչ է արել պօլուիմպէրիալը, նա արտասուալից աչքերով ասում էր ինձ, որ այլ ևս չ'հարցնեմ։ «Ի՞նչ անեմ, մայրիկ» ասում էր, «չ'ունիմ։ Ես ինքս էլ չ'գիտեմ, թէ ինչ եղաւ։»—Այս բոլորը ապացուցանում է կամ թեթևամտութիւնը, կամ...մի աւելի վատ բան։

ՄԱՐԻԱՄ։ Սիրելի երէցկին. միայն այս անգամ ներեցէք Սրբուհուն։ Դուք, յայտնի բան է, չէք զգալ ձեր ներողամտութեան վերայ։ Նա շատ վեհ և ազնիւ հոգի ունի։ Տուէք Նորան Աստուածաշունչը։ Նա շատ կ'ուրախանայ։

ԵՐԻՑԿԻՆ։ Խոստովանում եմ, մինչև օրս նա իմ սիրելին էր։ Այս բոլոր տարին նա իրան շատ լաւ

էր պահում, աւելի բարեպաշտ, քան Հայկանուշը և այս պատճառով ես Նորա համար նշանակեցի հայրական Աստուածաշունչը, ինչպէս մի ամենաթանկագին ընծայ, որով ես կարող էի վարձատրել Նորան։ Բայց նա Աստուածաշունչն էլ չի կարող պահպանել, ինչպէս չ'կարողացաւ պահել ու խնայել իւր հօր վերջին պարգևը։

3. ՏԵՍԻԼ.

Նորա և Գիւլայանէ։ (Հազած նոր, կապոյտ շերտերաւոր սպիտակ շրջազգեստ։)

ԳԱԻԱՆԷ։ (Վազելով դէպի Մարիամը) Հաղիւ թէ ես ձեզ գտայ, օրիորդ։ Թոյլ տուէք ինձ, որ մի լաւ շնորհակալութիւն անեմ ձեզ։ Օհ, դուք չ'պէտք է արհամարհէք մի խեղճ աղջկայ շնորհակալութիւնը։ (Կամենում է ձեռքը համբուրել. բայց Մարիամը չի թոյլ տալիս և կանգնում է։)

ՄԱՐԻԱՄ։ Ո՞վ ես դու, սիրելիս։ Ինչո՞ւ ես շնորհակալութիւն անում ինձ։ Ինչո՞ւ ես ձեռքս համբուրում։

ԳԱՑԻԱՆԷ։ Դուք ընծայեցիք ինձ այս նոր ու գեղեցիկ զգեստը. այդ բաւական չի, հետն էլ այնպիսի մխիթարական խօսքեր էք գրում։ Դուք՝ ինձ չ'ճանաչելով, լաւութիւն էք անում։ Ո՜հ, ի՞նչպէս պէտք է շնորհակալութիւն անեմ Աստուծուն, որ այդպիսի բարերարուհի է ուղարկում ինձ, խղճուկ

որբիս։ (Տալիս է երէցկնոջն այն թղթի կտորը, որ կարուած էր զգեստի վերայ։ Երէցկինը կարդում է. իսկ Մարիամը ձեռներով ծածկում է իւր երեսը։) Ես ձեզ բոլորը կ'պատմեմ, երէցկին։ Ես մեծ մօրս հետ, մի-մի ծանր փայտի բեռը շալակած՝ տուն էինք տանում. օրն արդէն մթնել էր. սենեակն էլ մութն էր։ Ես մի փոքր կրակ հանեցի վառարանից, մոմը վառեցի և կամենում էի մոմակալը դնել սեղանի վերայ։ Տէր Աստուած, որքան զարմացայ...։ Սեղանի վերայ դրուած է այս զգեստը, և վերան կարուած է այս թղթի կտորը։—Այս զգեստը ճիշդ նոյն քաթանից է կարուած, որ սկսել էր հիւսել ինձ համար հանդուցեալ հայրս։ Ո՞հ, ի՞նչպէս սրտաշարժուեցայ ես, ի՞նչպէս ուրախացայ։

ԵՐԷՑԿԻՆ։ (Մարիամի երեսից յետ է քաշում ձեռները։) Մարիամ, մի՛ք ծածկիլ ինձնից ձեր սիրելի դէմքը։ Թողէ՛ք, որ ես կարդամ ձեր աչքերում այն բարեգործ հոգու արտայայտութիւնը, որ թելադրեց ձեզ՝ թէ այս բարի գործը և թէ այս մխիթարական խօսքերը, որոնք գրուած են այս թղթի վերայ։ Ո՞հ, բաղդաւոր է այն մայրը, որին Աստուած այսպիսի աղջիկ է տուել։ Դուք, ինչպէս մխիթարիչ հրեշտակ՝ ծածկաբար ներս էք մտնում որբի աղքատ բնակարանը և թողնում էք նորա համար ձեր նուէրները մի այսպիսի քնքշութեամբ։ Սիրելի Մարիամ, հոգեակս։ (Գրկում է։)

ՄԱՐԻԱՄ։ Օ՛հ, բաւական է. 'ի սէր Աստուծոյ

լռեցէ՛ք։ Դուք չ'գիտէք, թէ ի՞նչպէս ձեր գովասանքները տանջում են ինձ։ Ինչո՞ւ դու կարծում ես, թէ այդ ես եմ արել, Գայիանէ։ Մի՞թէ դու տեսար այն մխիթարիչ հրեշտակը, որ ծածկաբար ներս մտաւ քո աղքատ բնակարանը, և թողեց քեզ համար այդ նուէրը։

ԳԱՅԻԱՆԷ։ Ես չեմ տեսել նորան. բայց գիտեմ, որ այդ հրեշտակը դո՛ւք էք։ Հէնց դուք տուեցիք իմ մեծ մօրը երեք ռուբլին, երբ նա տաշտեղ էր հաւաքում ձեր դռանը։

ԵՐԷՑԿԻՆ։ Եւ դո՛ւք էք գրել այս թղթի կտորը։ Ես ճանաչում եմ ձեր ձեռքը։ Ո՞հ, ով ձեզ պէս բարեգործութիւն է անում, Աստուած նորա վերայ կ'ուղարկի իւր օրհնութիւնը և կ'վարձատրի։

ՄԱՐԻԱՄ։ Ե՛րէցկին, դուք ինքներդ կարող էք վարձատրել ինձ։ Ես մի շատ մեծ խնդիր ունիմ ձեզ մօտ։

ԵՐԷՑԿԻՆ։ Ասացէ՛ք. ի՞նչ խնդիր։ Ես պատրաստ եմ անել ձեզ համար ամէն բան, ինչոր կարող եմ։

ՄԱՐԻԱՄ։ (Գգուանքով.) Սիրելիս, աղաչում եմ. մի՛ք բարկանալ իմ խնդիրքիս վերայ։ Աստուածաշունչը Սրբուհուն տուէ՛ք։

ԵՐԷՑԿԻՆ։ Ո՛չ, Մարիամ։ Անկարելի է։ Ձեր ազնիւ սիրտը կ'հասկանայ, որ այդպէս վարուելը և՛ անիրաւացի կ'լինէր, և՝ կողմնապահութիւն։ Ինչո՞ւ ես անիրաւաբար վշտացնում Հայկանուշին, որ աւելի արժանի է այս ընծային և ամէն կերպով արժանա-

ցաւ սորան։ Լա՛ւ մտածեցէ՛ք սորա վերայ։

ՄԱՐԻԱՄ։ (Ձեռները կոտրատելով) Տէր Աստուած. ի՞նչ անեմ հիմա։ Ուրեմն, ի՞նձ ընծայեցէ՛ք այդ Աստուածաշունչը։

ԵՐԷՑԿԻՆ։ Ո՛չ, Մարիամ։ Ես չեմ ընծայիլ ձեզ, որովհետև ձեզ համար նա չի կարող այն գինն ունենալ, ինչոր ունի իմ զաւակների համար։ Լա՛ւ մտածեցէ՛ք։ (Մարիամը լաց է լինում. իսկ երէցկինը հանում է կողովից միւս ընծաները և, դարսելով միւս սեղանի վերայ՝ շարունակում է.) Գիտէ՞ք, ինչ կայ, Մարիամ։ Եթէ այդչափ սիրում էք Սրբուհուն, այն ժամանակ դուք չ՚պէտք է ներէք նորան իւր յանցանքը. այլ ընդհակառակն՝ պէտք է պահանջէք նորանից աւելի մեծ կատարելութիւն և կուրօրէն չ՚սիրէք նորան։—Ահա՛, այժմ ամեն բան պատրաստ է։ Կարելի է նա՛և զանգակը հնչեցնել, որ երեխայքը ներս մտնեն։ Նոքա վաղուց սպասում են իմ փոքրիկ զանգակի ձայնին։ Ա՞խ, ես մոռացայ էլ այն քաղցր կարկանդակը, որ եփել եմ նոցա համար և, որով մոռացիր եմ ձեզ ամենիդ հիւրասիրել։ (Դուրս է գընում։)

4. ՏԵՍԻԼ.

Մարիամը և Գայիանէն։

ԳԱՅԻԱՆԷ։ Բաւական է, որքան լաց եղաք, Օ՛րիորդ։ Ինչո՞ւ դուք այդքան ափսոսում էք այդ Աստուածաշնչի վերայ։ Մի՞թէ աշխարհիս երեսին էլ ուրիշը չ՚կայ, աւելի նորը և աւելի լա՛ւ կազմով։

ՄԱՐԻԱՄ։ Այս Աստուածաշունչը թանկ է Սրբուհու համար այն պատճառով, որ պատկանում էր իւր բարի հօրը, որ կարդում էր այն առաւօտ և երեկոյ։ Ա՞խ, Գայիանէ, եթէ գիտենայիր, թէ ինչո՞ւ են Սրբուհուն զրկում այս ընծայից...(լացի ձայնով) դու աւելի շատ լաց կ՚լինէիր, քան ես։ (Երեսը թաշկինակով ծածկում է։)

ԳԱՅԻԱՆԷ։ Մի՛ լաք, Օ՛րիորդ։ Ես չեմ կարող տեսնել իմ բարերարուհու արտասուքները։ Աղաչում եմ, մի՛ լաք։ Ասացէ՛ք ինձ, ինչ է պատահել։

ՄԱՐԻԱՄ։ Ա՞խ, կարծես, այսօր ամենքը միմեանց խօսք են տուել՝ ինձ ցաւացնելու։—Ամենքը նայում են ինձ վերայ մի այնպիսի շնորհակալութեամբ, մի այնպիսի յարգանքով, որոնց ես ամենևին արժանի չեմ։ Ամենքն ինձ փառաբանում են գովասանքներով. իսկ ես՝ պէտք է լռեմ և ականջ դնեմ այն բարի գործերի գովասանքներին, որ ես չեմ արել։ Այդ արդէն չափից անցկացաւ։ Ես էլ չեմ կարող համբերել սորան։

ԳԱՅԻԱՆԷ։ Մի՞թէ ինձ ուրախացնելը ձեզ համար ուրախութիւն չէ։

ՄԱՐԻԱՄ։ (Պաղատական ձայնով) Ո՜հ, լսի՛ր, եթէ գո՛նէ մի փոքր ինձ սիրում ես։ Այսօր ես շատ տխուր եմ։ (Գլուխը դնում է սեղանի վերայ և լաց է լինում։)

ԳԱՅԻԱՆԷ։ Կարելի է, ձեզ հաճելի չի, որ ես այստեղ եմ...։ Եթէ կ'հրամայէք, դուրս կ'գնամ։

ՄԱՐԻԱՄ։ (Գգուելով նորան) Ո՛չ, սի՛րելի Գայիանէ, կա՛ց այստեղ. ինձ շատ հաճելի է քեզ տեսնել։ Ահա՛, երէցկինն էլ բերում է կարկանդակը։ Շուտով աղջկերանցն էլ կ'կանչի։

---

5. ՏԵՍԻԼ։

Ամենքը։

(ԵՐԷՑԿԻՆԸ բերում է քաղցր կարկանդակը, դնում է մեծ սեղանի վերայ. յետոյ հնչեցնում է փոքրիկ զանգակը։ Սրբուհին և Հայկանուշն ուրախուրախ ներս են վազում։)

ՀԱՅԿԱՆՈՒՇ։ Ո՞ր սեղանն է պատրաստուած ինձ համար...։

ՍՐԲՈՒՀԻ։ Իսկ ինձ համա՞ր՝ որը։

ՀԱՅԿԱՆՈՒՇ և ՍՐԲՈՒՀԻ (միասին)։ Ո՜հ, մայրիկ. ցոյց տուր մեզ մեր սեղանները։

ԵՐԷՑԿԻՆ։ (Հայկանուշին) Այն սեղանը, որի վերայ դրուած է Աստուածաշունչը, քեզ համար է պատրաստուած։ (Սրբուհուն) Իսկ այս՝ քեզ համար։ (Սրբուհին և Հայկանուշն ուրախութեամբ քննում են բոլորը, ինչպէս դրուած է իւրեանց սեղանների վերայ։ Հայկանուշը մեծ ուրախութեամբ վերայ է ընկնում, Աստուածաշունչն է վեր առնում։ Իսկ Սրբուհին մրտածմունքի մէջ ընկղմուած և ձեռները կցած՝ կանգնում է իւր սեղանի առաջը։)

ՀԱՅԿԱՆՈՒՇ։ (Ուրախացած) Հայրիկի Աստուածաշունչն ինձ ընկաւ։ Օ՜հ, մայրիկ, սի՛րելի մայրիկ։ Ի՜նչ թանկագին բան է. ի՜նչ գանձ է։ (Բաց է անում գիրքը և նայում է առաջին երեսին։) Ահա՛, հայրիկի անունը, որ գրել է իւր սեփական ձեռքով։ (Համբուրում է ձեռագիրը։)

ՍՐԲՈՒՀԻ։ (Նայելով Մարիամի և Գայիանէի վերայ՝ քաջալերւում է և, վեր առնելով իւր սեղանից սաղմոսն՝ ասում է.) Մայրիկ, մի փոքր քաղցր նայիր ինձ վերայ։ Ների՛ր ինձ։ Խոստանում եմ քեզ, որ կ'ուղղուիմ։ Ահա՛, այս գեղեցիկ գիրքը կ'սովորեցնի ինձ ամեն լաւ բան։

ԵՐԷՑԿԻՆ։ Այո՛, Սրբուհի՛. ուղղուի՛ր, զգուշացի՛ր և աւելի խնայող եղի՛ր։ Մի կորցնիլ այնպիսի թանկագին բաներ, որոնց ոչ մի բանով չի կարելի փոխանակել։ Ասեղ, հո՛, չէր։ Թեթևամտութիւնը լաւ բան չի։ Նա միշտ ունի վատ հետևանքներ։ Հէնց այսօր. եթէ քո թեթևամտութիւնը չլինէր, Աս-

տուածաշունչը քեզ կ'ընկնէր։ Բայց, էլ փոխել չի կարելի։ Դու գիտես, որ ես միշտ կատարում եմ տուած խօսքս։

ՍՐԲՈՒՀԻ։ Լաւ։ Բայց, բաւական է, որքան բարկացար ինձ վերայ, սիրելի մայրիկ։ Ցայսմիկ բան է, Հայկանուշն ինձնից աւելի արժանի է այս Աստուածաշնչին. և ես հաւատացած եմ, որ նա թոյլ կ'տայ ինձ երբեմնապէս կարդալու։ Այնպէս չէ՞, Հայկանուշ։

ՀԱՅԿԱՆՈՒՇ։ Օ՜, ինչ ասել կ'ուզի։ Միասին կ'կարդանք։ Բայց տեսնենք, ուրիշ ինչ է ընծայել մեզ մայրիկը։ (Նայում է իւր ընծաները։) Տէր Աստուած, ի՜նչ գեղեցիկ է այս բոլորը, աչքերիս չեմ հաւատում։

ԵՐԷՑԿԻՆ։ Ուրախութեամբ ընդունեցէք, որդեակներս, ինչ որ ես ընծայում եմ ձեզ սիրով։ (Նայելով Մարիամի վերայ.) Ես ճանաչում եմ մի հրեշտակ, որ ծաղուկ բարերարութիւն է անում և ցամաքեցնում է որբի արտասուքները։ Նայեցէք Գայիանէին. ի՜նչ նոր ու գեղեցիկ շրջազգեստ է հագել։ Մարիամն է տարել նորա համար, ամենքից ծաղուկ։

ԳԱՅԻԱՆԷ։ (Սրբուհուն) Եւ հէնց այնպիսի շրջազգեստ, որ հայրիկս սկսել էր հիւսել ինձ համար։ Միաներդ գալի՞ս է, որ ես անցեալ օրը ձեզ ցոյց տուի։

ՄԱՐԻԱՄ։ (Մի կողմն է քաշում Սրբուհուն, գրրկում է նորան և արտասուալից աչքերով ասում է.) Ա՜խ, եթէ դու գիտենայիր, թէ որքան ծանր է ինձ համար լսել այդ անարժան գովասանութիւնները, այս ընդհակառութիւնը։ Սրբուհի, ես չեմ կարող զսպել արտասուքս։

ՍՐԲՈՒՀԻ։ Ահա, հիմա ես տեսնում եմ, թէ որքան յուսալի է քո բարեկամութիւնը։ Լռիր, Մարիամ, խնդրում եմ, լռիր։

ՄԱՐԻԱՄ։ Մի պահանջիր ինձնից, ինչ որ անկարելի է։

ԵՐԷՑԿԻՆ։ Օ՜, միշտ սիրեցէք միմեանց։ Հայկանուշ, դու էլ մոտեցիր։ Նայիր Մարիամին։ Որդեակներս, թող սա միշտ օրինակելի լինի ձեզ համար. ամեն բանում օրինակ առէք սորանից։ Ինձ էլ պառաւութեանս ժամանակ այնպէս ուրախացրէք, ինչպէս Մարիամն ուրախացնում է իւր մօրը։ Այնպէս եղէք, որ ես չկարողանամ նախանձուիլ որ և է մօր վերայ և, որ ես գերեզման իջնեմ այն մխիթարական յուսով, թէ դուք էլ այնպէս բարեգործ էք, ինչպէս մեր սիրելի Մարիամը։

ՄԱՐԻԱՄ։ (Տաքացած) Ո՛չ. այդ արդէն չափից անցկացաւ։ Բարեկամութեան համար ես պատրաստ եմ մեռնելու. բայց յափշտակել մայրական սրտից այդպիսի օրհնութիւն,...այդ յանցանք կ'լինէր։ Այդ բարեկամութիւնն անգամ չի կարող արդարացնել։ Այդ կ'լինէր ցաւութիւն, տմարդութիւն։ (Նա գրպանից հանում է թաշկինակը, որի մէջ պահել էր պո-

լուիմպէրիալը. կամաց դնում է մեծ սեղանի վերայ և ասում.) Երէցկին, մօտեցէք այստեղ. ես ձեզ նորատարութիւն մի բան պէտք է ընծայեմ: Դուք կընդունէք իմ ընծան. այնպէս չէ՞:

ԵՐԷՑԿԻՆ: Այդ ի՞նչ ընծայ է, սիրելի Մարիամ:

ՄԱՐԻԱՄ: (Երէցկնոջը մօտեցնելով սեղանին.) Այս՝ ձեր մայրական սիրոյ վարձատրութիւնն է, ձեր այն քնքուշ հոգացողութիւնների վարձատրութիւնն է, որոնցով դուք դաստիարակում էք ձեր աղջկերանցը: Իմ ընծան ձեզ համար մի ամենամեծ ուրախութեան պատճառ կ'դառնայ: Դուք պէտք է հաւատացած լինիք, որ չկայ մի այնպիսի մայր, որին դուք կարողանայիք նախանձուիլ:

ԵՐԷՑԿԻՆ: Ես ոչմի կերպով չեմ կարողանում գուշակել, թէ ի՞նչ է նշանակում այս: Դուք հանելուկներով էք խօսում:

ՍՐԲՈՒՀԻ: (Մարիամին կամաց և ահով.) Մի՞թէ կամենում ես ինձ դաւաճանել:

ՄԱՐԻԱՄ: (Երէցկնոջը) Երէցկին, բարձրացրէք իմ թաշկինակը:

ԵՐԷՑԿԻՆ: (Բարձրացնում է թաշկինակը. փողը դիպչելով սեղանին՝ ձայն է հանում. երէցկինը զարմանալով վեր է առնում և ասում.) Ի՞նչպէս: Այս Սրբուհու պօլուիմպէրիալն է: Ո՞վ տուեց ձեզ:

ՄԱՐԻԱՄ: Հիմա Սրբուհին ինձ վերայ կ'բարկանայ: (Սրբուհուն) Մի բարկանալ, եթէ ես լուծեմ այս հանելուկը: (Երէցկնոջը) Դուք բաղտաւոր մայր

էք, երէցկին: Ձեր աղջիկը, ձեր Սրբուհին այն մըխիթարիչ հրեշտակն է, որ ծածկաբար բարեգործութիւն է անում, որ ծածուկ ներս է մտնում որբի աղքատ բնակարանը՝ նորա արտասուքը ցամաքեցնելու համար: Սրբուհին, չկամենալով, որ իւր հանգուցեալ հօր պարգևն ուրիշի ձեռքն ընկնէր, կամենում էր, որ ես նորա պօլուիմպէրիալը մանրէի արծաթ փողով. այն փողով նա վճարեց Դայիանէի շըրջազգեստի գինը: Նա առաջուց գիտէր, որ ամենքը ինձ վերայ կարծիք կ'տանեն, և ինձնից խօսք առաւ լռելու: Ես երկար ժամանակ լռեցի. բայց էլ ոչ չունէի լռելու: Իմ կարծիքով, աւելի հեշտ է համբերել անէծքի, քան՝ անարժան գովասանքների:

ԵՐԷՑԿԻՆ: Ի՞նչ էք ասում. բայց, Մարիամ, թուղթը ձեր գրածն է:

ՄԱՐԻԱՄ: Այո՛. ես այդ թուղթը գրեցի նորա խօսքերով: Սրբուհին չէր կամենում, որ ինքը յայտնուէր: Նորան բոլորովին յաջողեցաւ իւր բարի գործը: Եւ նա ի՞նչպէս վարձատրուեցաւ դորա փոխարէն: (Վերառնելով Աստուածաշունչը) Այս գիրքը, որ նա էր կամենում ունենալ, իրան չընկաւ: Սորան յանդիմանում էին, պատժում էին. իսկ ինձ.... շնորհակալութիւն էին անում, գովում էին: Այժմ կ'հասկանաք, թէ ինչու ես այնպէս լաց էի լինում:

ԵՐԷՑԿԻՆ: Սրբուհի. դու էլ լռում էիր, երբ ես քեզ հետ այնպէս խիստ էի վարուում: Դու չ'բաց արիր ինձ քո սիրտը, համբերութեամբ տանում էիր

նախատինքներին և միայն հոգուդ խորքումն ուրախանում էիր քո արած բարեգործութիւնով։

ՍԲԲՈՒՀԻ։ Ներիր ինձ, մայրիկ։ Զէ՞, որ դու ինքդ միշտ ասում ես, թէ բարեգործութիւնն այնպէս ծածուկ պէտք է անել, որ ուրիշները չիմանան։

ԵՐԷՑԿԻՆ։ Ցորենի սերմն ընկաւ բարի հողում և տուեց հարիւրաւոր պտուղ։ Ի՛մ սիրելի և բարի աղջիկ. գրկի՛ր ինձ։ Թող, որ սեղմեմ քեզ իմ խորին կերպով շարժուած սրտիս։ (Երէցկինը գրկում է Սբբուհուն. Գայիանէն համբուրում է Սբբուհու ձեռքը և հեռանում։)

ԳԱՅԻԱՆԷ։ Ես էլ չէի կարող ճանաչել իմ մրխիթարիչ հրեշտակին։ Ի՞նչպէս կարող էի ես յիշել սորա անունը աղօթքով և օրհնութեամբ։ Իսկ սա մտածում էր ինձ վերայ այսպիսի սիրով։

ՄԱՐԻԱՄ։ Ո՛չոք բացի ինձնից՝ չէր կարող լուծել այս հանելուկը։ Ցոյս ունիմ, որ դու ինձնից էլ բաւական ես։ Սբբուհի՛, մի՛ բարկանալ ինձ վերայ։ Մի՛ դադարիլ ինձ սիրելուց։ Միշտ բարեկամ լինի՛նք. միշտ հաւատարիմ մնանք բարեգործութեանը և բարեկամութեանը։

ԵՐԷՑԿԻՆ։ Այս պօլուիմպէրիալը ես կ'պահեմ ինձ վերայ՝ ինչպէս մի հմայեակ, մինչև իմ կեանքի վերջը։ Իսկ մեռնելուս ժամանակը քեզ կ'տամ, Սբբուհի՛, ինչպէս ամենալաւ և ամենաթանկագին ժառանգութիւն։

ՍԲԲՈՒՀԻ։ Ո՞հ, մայրիկ. Մարիամ, ի՞նչպէս պէտք է ես արտայայտեմ իմ շնորհակալութիւնը։

ԵՐԷՑԿԻՆ։ Ո՞հ, եթէ քո հայրը կարողանար տեսնել այս,...։ Բայց ես հաւատացած եմ, որ նա տեսնում է քեզ և օրհնում է ինձպէս։ (Այս բոլորը միջոցում, Հայկանուշը, որ լուռ և մտածմունքի մէջ ընկած՝ կանգնած էր իւր սեղանի մօտ, արագութեամբ վեր է առնում Աստուածաշունչը, մօտենում է Սբբուհուն. և ծունկ է չոքում նորա առջևը։)

ՀԱՅԿԱՆՈՒՇ։ Սիրելի քոյրիկ. վերջապէս ես էլ մօտենում եմ քեզ սիրով. (Սբբուհին բարձրացնում է Հայկանուշին։) Բայց ես բերում եմ քեզ այն ընծան, որի վերայ դու միայն իրաւունք ունիս, որ միայն քեզ է պատկանում։ Դու մեզնից ամենալաւն ես, և քո վարձատրութեան համար՝ քեզ պէտք է հանի հայրիկի Աստուածաշունչը։ Ես գիտեմ, որ մայրիկը ոչ մի պատճառով չի խլել ինձնից այն, ինչոր արդէն մի անգամ տուել է ինձ, և այս պատճառով ես յօժարութեամբ տալիս եմ քեզ այս գիրքը, որի վերայ շրջում է մեր հոգին։ (Սբբուհին առնում է Աստուածաշունչը։ Ցետոյ երէցկինը պարփակում է իւր գրկումը երկու աղջկերանցը։ Մարիամը և Գայիանէն կանգնում են երկու կողմում։)

ԵՐԷՑԿԻՆ։ (Ձեռները դնելով Սրբուհու և Հայկանուշի գլխին.) Դուք երկուսդ էլ ձեր բարեգործ հոր արժանաւոր զաւակներն էք։ Ձեզ վերայ հանգըստանում է նորա հոգին։ Ես երջանիկ մայր եմ. իսկ դուք՝ իմ կեանքի միակ ուրախութիւնը։

(Վարագոյրն իջնում է։)

ՄԵՐ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

1) ԱՆԵԿԴՕՏՆԵՐ. Հատոր I. 1876 . . . 50 կ.
2) ԱՆԵԿԴՕՏՆԵՐ. Հատոր II., 1877 . . 50 կ.
3) ՆԱԽԱՊԱՇԱՐՄՈՒՆՔ. Հ. I., 1878 . 50 կ.
4) ՊՕԼՈՒԻՄՊԷՐԻԱԼ. 1878 . . . . . 20 կ.

Այդ գրքերը կարելի է ստանալ հետևեալ հասցէով.

„Въ Тифлисъ. — Кавказская Книжная Торговля **З. П. Грикурова**“.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

1.

«ԱՆԵԿԴՕՏՆԵՐ» ի III. հատորը պատրաստելու համար ժողովում ենք մեր կեանքից առնուած անեկդոտներ։ Մեզ անեկդոտներ ուղարկողների ազգանունները կ'տպագրուին գրքի վերջումը և նոցանից իւրաքանչիւրը կ'ստանայ մի օրինակ։

2.

«ՆԱԽԱՊԱՇԱՐՄՈՒՆՔ»-ի II. հատորը պատրաստելու համար ժողովում ենք մեր կեանքից առնուած նախապաշարումներ։ Մեզ նախապաշարումներ ուղարկողների ազգանունները կ'տպագրուին գրքի վերջումը և նոցանից իւրաքանչիւրը կ'ստանայ մի օրինակ։

ՄԵՐ ՀԱՍՑԷՆ.

"Въ Симферополь (Крымъ.) Въ Армянское Училище. Учителю Ованесу Назаріанцъ.„

№	Կովկասեան զրավաճառանոցի. Զաք. Գրիգորեանցի տպագրութիւնները.— ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐՔԵՐ.	Կոպ
1	Ա.քիմեանց.«Նալայ ու Դամայանտի» Հնդկաստանի հեքիաթ. թարգմ. Ցոգուտ այն 3000 հայ ընտանիքների, որոնք ներկայ պատերազմի պատճառով ստիպուեցան գաղթել դէպի Երեւանի նահանգը։—Գինն է	20
	Նոյն տեղումվաճառւում են.	
1	Ա.քիմեանց.—«Ոսկէ ասեղներ». հեքիաթ. թարգմ.։	10
2	Տ. Ն. Ա.—«Աշոծնի Ընտանիքը». թարգմանութիւն.։	25
3	Օրիորդ Սահակեանց.—«Մանկական Վէպ». թարգմ.։	10
4	— «Փոքրիկ Մէգը և նորա մանուկները». թարգմ.	20
5	Միրզաբէգեանց.—«Սիրիր թշնամիներդ». թարգմ.	35
6	Արշալոյս.—«Թռչնորս». թարգմ. . .	40

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊԿ։

ՀՀ Ազգային գրադարան
NL0383879

283